ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ, Հ. Մելիքյան
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյան,
ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ սպա, բ/ծ փոխգնդապետ Մ. Գալստյան,
հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյան
Բացակայում հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի սպա, բ/ծ կապիտան Ռազմիկ Դրամբյանը:

Ի գիտություն՝ հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում 01.04.2022թ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/39 ծածկագրով բողոքը (որը պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 04.04.2022թ.) հանձնաժողովը 05.04.2022թ. կայացած նիստում կասեցրեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ԳՀ ընթացակարգի նիստի աշխատանքներն առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով (գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշումը տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրը):

20.04.2022թ. ժամը 10^{00}-ին կայացրած նիստում հանձնաժողովը արձանագրեց, որ սույն ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/39 ծածկագրով բողոքի վերաբերյալ կայացրած որոշմամբ (որը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 19.04.2022թ.), «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ***մերժվել է ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:***

Հիմք ընդունելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց շարունակել նիստի աշխատանքները՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

20.04.2022թ. ժամը 15^{10}-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Բժշկական թթվածնի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	ԱՁ Սուրեն Այվազյան
2.	«Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ
3.	«Անխոցելի» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 **ԱՁ Սուրեն Այվազյանի և «Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ-ի** էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, ***իսկ*** «Անխոցելի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված էլեկտրոնային հայտին որևէ փաստաթուղթ կցված (բեռնված) չէր: Հիմք ընդունելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հանձնաժողովը մասնակցի հայտը բացելու և գնահատելու հնարավորություն չուներ, ուստի հանձնաժողովը որոշեց մերժել «Անխոցելի» ՍՊԸ-ի հայտ:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ հետևյալ դեպքի***.

ԱՁ Սուրեն Այվազյանի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1)-ում տեխնիկական բնութագիրը լրացված է թերի՝ մասնավորապես բացակայում է ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված հետևյալ պարբերությունը. ***«...Պետք է մատակարարվի «Գնորդի» կողմից տրամադրված 40լ-ոց բալոններով, բալոնում թթվածնի ծավալը՝ ոչ պակաս 6մ³: Հատկացված՝ պատվիրատուի կողմից մակնշված բալոնները պետք է տեղափոխվեն մատակարարի հաշվին, իր տրանսպորտային միջոցներով, լիցքավորվեն և եր վերադարձվեն 1 օրվա ընթացքում»***: Անհրաժեշտ է տեխնիկական բնութագիրը լրացնել և ներկայացնել հրավերի պայմաններին համապատասխան:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **ԱՁ Սուրեն Այվազյան**ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

22.04.2022թ., ժամը 12:30-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ **ԱՁ Սուրեն Այվազյանին** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը և վերջինիս հայտը գնահատվեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Չ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Բժշկական թթվածին	հատ	1500	4,320,000	1	«Շիրինյան Եղբայրներ» ՍՊԸ	3,495,000	699,000	4,194,000
					2	ԱՁ Սուրեն Այվազյան	4,200,000	0	4,200,000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ ԱՁ Սուրեն Այվազյանն ԱԱՀ վճարող չէ:

3.4 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1**22.04.2022թ**.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել ***«Շիրինյան եղբայրներ» ՍՊԸ-ին:***

4.3 Գնահատող հանձնաժողովը հաստատեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Մաղաքյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Մաղաքյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/24» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Ա. Նազարյան
Գնահատող	Մ. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան